

**ՄԻԼԱՆ ԿՈՒՆԴԵՐԱՅԻ «ԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՆԵԼԻ
ԹԵԹԵՎՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՊԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ
ԷՔՋԻՍՏԵՆՑԻԱԼ ՀԻՄՔԵՐԸ**

ՔՐԻՍՏԻՆԵ ԴԱԴՅԱՆ 

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ

Ուսումնասիրության նպատակն է վերլուծել Միլան Կունդերայի «Կեցության անտանելի թեթևությունը» փիլիսոփայական վեպի կեցության թեթևության ու ծանրության վերացական հասկացությունները կերպարների միջոցով: Գլխավոր կերպարները՝ Բժիշկ Թոման, նրա կինը՝ Թերեզան, սիրուհին՝ Սաբինան, և Սաբինայի սիրելին՝ Ֆրանցը, տարբեր մոտեցումներ ունեն այս հասկացությունների նկատմամբ: Վեպում թեթևությունն ու ծանրությունն անընդհատ միահյուսվում են և ստեղծում ներքին բախումներ ու տառապանք: Կունդերայի վեպի հերոսներն ապրում են մի աշխարհում, որտեղ կեցության թեթևությունն ու ծանրությունը՝ որպես հակադիր ուժեր, թափանցում են նրանց յուրաքանչյուր գործողության, յուրաքանչյուր ընտրության մեջ: Այդ ուժերը դառնում են ոչ միայն ստեղծագործության փիլիսոփայական ֆոնը, այլ նաև որոշիչ գործոններ հերոսների կյանքում:

Ուսումնասիրության խնդիրն է բացահայտել կեցության թեթևության և ծանրության միջև կապը՝ որպես փիլիսոփայական կատեգորիաներ, և թե ինչպես են դրանք ազդում մարդու ազատության և ճակատագրի վրա:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է գրականության մեջ էքզիստենցիալ հարցերի նկատմամբ աճող հետաքրքրությամբ, ինչպես նաև գրական ստեղծագործության համատեքստում փիլիսոփայական հասկացությունների ուսումնասիրմամբ:

Բանալի բառեր – Միլան Կունդերա, Թոմա, Սաբինա, հալոցքի ժամանակներ, էքզիստենցիալ ծածկագիր, սիրային խաղի ատրիբուտ, սև պենյուար և գլխարկ, թեթևություն և ծանրություն, Գայ Սկարպետտա, ռեկվիզիտ

* **Քրիստինե Դադյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի ասիստենտ

Кристина Дадян – кандидат филологических наук, ассистент кафедры иностранных языков Иджеванского филиала ЕГУ

Kristine Dadyan – PhD in Philology, Assistant at the Chair of Foreign Languages at YSU Ijevan Branch
Էլ. փոստ՝ christin.dadian@gmail.com <https://orcid.org/0009-0001-3475-5888>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 12.01.2025

Գրախոսվել է՝ 04.03.2025

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

Ներածություն

«Կեցության անտանելի թեթևությունը» վեպում թեթևության և ծանրության փիլիսոփայական կատեգորիաները ոչ միայն ստեղծագործության հիմնական նյութն են, այլև հերոսների ներաշխարհը հասկանալու բանալին: Թեթևությունն ու ծանրությունը վեպում ընկալվում են և՛ որպես ֆիզիկական վիճակներ, և՛ որպես կյանքի ընտրության, բարոյական կոնֆլիկտների և իմաստի որոնման խորհրդանիշեր: Հերոսների ճակատագրերի, նրանց անձնական դրամաների և ձգտումների միջոցով Կունդերան պատկերում է, թե ինչպես կյանքի յուրաքանչյուր պահ կարող է լինել և՛ ոչ էական, և՛ կարևոր, որտեղ ազատության զգացումը կարող է կապված լինել ներքին դատարկության, իսկ ծանրությունը՝ կյանքի իմաստի և պատասխանատվության հետ: Հեղինակը վեպի հերոսների միջոցով ցույց է տալիս, թե ինչպես թեթևությունն ու ծանրությունը կարող են միաժամանակ գոյություն ունենալ յուրաքանչյուր մարդու կյանքում՝ ձևավորելով նրա ճակատագիրը և աշխարհընկալումը:

Իր հերոսների ճակատագրերի միջոցով Կունդերան ցույց է տալիս, թե ինչպես են տարբեր մարդիկ ընկալում կեցության թեթևությունն ու ծանրությունը: Ստեղծագործությունը միահյուսում է երկու հակադիր վիճակներ՝ կեցության թեթևությունը, որը ենթադրում է պատասխանատվության բացակայություն, և կեցության ծանրությունը, որն իր հետ բերում է յուրաքանչյուր արարքի և դրանից բխող հետևանքի գիտակցում: Վեպը փիլիսոփայական հարց է բարձրացնում՝ հնարավոր է ապրել թեթև կյանք՝ չկորցնելով կեցության իմաստը:

Վեպի կերպարները կեցության թեթևության և ծանրության համատեքստում

Չեխոսլովակիա, 1968 թ., Խրուշչովի հալոցքի ժամանակներ, որը սոցիալիստական երկրներում դրսևորվում էր գիտակցության փոփոխությամբ: Արդեն կարելի էր մամուլում բացեիբաց խոսել ստալինյան ռեժիմի զոհերի մասին, պատերից արդեն կախված են «Բիթլզի» լուսանկարները, և ժողովուրդները վայելում էին այդ հանկարծակի ազատությունը: Մինչդեռ ԽՍՀՄ-ում Բրեժնևի ապարատը թափ էր հավաքում՝ աստիճանաբար սեղմելով արձակված պտուտակները, կարմիր աստղերով տանկերն արդեն ճանապարհվում էին Չեխոսլովակիա:

Քաղաքական այս համապատկերում ձևավորվում է այուժեն:

Վեպի հերոսներից յուրաքանչյուրը փիլիսոփայական տարբեր հասկացությունների՝ ազատության, սիրո, պատասխանատվության և այլնի, կրողներ են: Կունդերան գրում է. «Իմ վեպերում «ես»-ի խնդիրը հասկանալ նշանակում է ըմբռնել դրա էքզիստենցիալ նշանակությունը, հասկանալ դրա էքզիստենցիալ ծածկագիրը: Երբ գրում էի «Կեցության անտանելի թեթևությունը» վեպը, հասկացա, որ այս կամ այն կերպարի ծածկագիրը կազմված է որոշակի բա-

նալի բառերից: Թերեզայի համար՝ մարմին, հոգի, գլխապտույտ, թուլություն, հովվերգություն, դրախտ: Թոմայի համար՝ թեթևություն, ծանրություն»¹:

Թոմայի, Թերեզայի, Սաբինայի և Ֆրանցի կերպարների, նրանց ներքին կոնֆլիկտների ու փոխհարաբերությունների միջոցով Կունդերան խորապես ուսումնասիրում է մարդկային էությունն ու էկզիստենցիալ հարցեր:

Այս վեպով Կունդերան փորձում է գտնել թեթևության և ծանրության տարբերությունները: Կեցության թեթևությունը վերածվում է ծանրության, երբ մեզ վիճակվում է որոշում ընդունելու կամ գործողություն կատարելու ծանրությունը՝ որպես անվերջանալի բեռ: Գրողը հարց է տալիս՝ մենք կկարողանա՞յնք լավ անել կամ լավագույն լուծումն ընտրել, եթե ունենայինք կյանքի բոլորովին այլ փորձառություն: Կունդերան կասկածում է, բայց թողնում է, որ ընթերցողն այս հարցի մասին կազմի սեփական կարծիքը:

Թոման տղամարդ է, ով քնում է բազում կանանց հետ: Նա կարող է չլինել սափրված, խռիվ մազերով, հին վերարկուով, կարող է սև աշխատանք կատարել, բայց կանայք միշտ պտտվում են նրա շուրջը՝ ընկալելով նրա բոլոր թերությունները որպես ոճ: Եվ նա քմիծաղով ուշադրություն է դարձնում բոլորին: Ինչ է կատարվում նրա գլխում՝ միայն սատանան գիտի. նա կամ թերթում հակաիշխանական հոդված է հրապարակում, կամ վագում գյուղ՝ նախապանություն անելու, կամ անսպասելիորեն ամուսնանում «հրեշտակ» աղջկա հետ:

Թոման Դոն ժուանի և Տրիստանի համադրությունն է: Նրա համար սեքսը խաղ է կամ հեղինակության խնդիր՝ առանց զգացմունքի կամ բարոյական պարտավորությունների: Երբ նա առաջին անգամ հանդիպում է Թերեզային, ունենում է պատասխանատվության, կարեկցանքի և քնքշության զգացում, որոնց մասին նախկինում չգիտեր, և այդ ամենը շրջում է նրա կյանքը: Թերեզան անվերապահորեն սիրում է Թոմային, բայց տառապում է նրա դավաճանություններից: Թերեզայի ուժը իր իսկ թուլությունն է, խոցելիությունը:

Թոման սկզբում մեզ ներկայանում է որպես անհոգ մարդ: Կանանց հետ նրա հարաբերությունները շատ հաճախ ֆիզիկական են, քան զգացմունքային: Նա վայելում է գայթակղության պատճառած հուզմունքը և այդ կապերի անցողիկությունը, որոնք համընկնում են կյանքի նկատմամբ նրա փիլիսոփայական դիրքորոշմանը: Նրա համոզմամբ՝ ոչինչ այս կյանքում հավերժական չէ, անցողիկ է, և հետևաբար չպետք է չափազանց լուրջ վերաբերվել դրան: Այնուամենայնիվ, նրա այս փիլիսոփայությունը վիճարկվում է, երբ նա սիրահարվում է Թերեզային և առերեսվում է պարտավորության ու սիրո անձանոթ զգացմունքներին: Ակնհայտ է Թերեզային լիովին հավատարիմ մնալու նրա դժկամությունը: Նա ձգտում է ազատության, բայց ի վերջո ընտրում է Թերեզային, որը ստիպում է նրան վերանայել սիրո և կապվածության մասին իր պատկերացումները: Թերեզայի հետ հարաբերություններում նա ապրում

¹ Kundera, Milan. "Dialogue on the Art of the Novel." The Art of the Novel. New York: Grove Press, 1986.

է խոցելիության և հուզականության զգացումներ, որոնցից նախկինում խուսափում էր: Վերջում ընդունում է, որը կյանքը բարդ կառույց է, ու թեև թեթևությունը գրավիչ է, բայց հարաբերությունների ծանրությունը կարող է առաջացնել լիարժեքության ու բավարարվածության զգացողություն: Մի քանի տարվա ամուսնությունից հետո Թոմասն հասկանում է, որ տարբեր կանանց տիրելու իր ցանկության մեջ թաքնված են կախվածություն, որոշակի հրամայական, նույնիսկ պարտավորություն: Թերեզայի միջոցով նա գիտակցում է, որ սիրո շնորհիվ է միայն մարդը ազատ. «Եթե սեռական գրգիռը մի մեխանիզմ է, որ զվարճացնում է Արարչին, սերը ընդհակառակն մեզ է պատկանում, և սիրո միջոցով է, որ մենք խույս ենք տալիս Արարչից: Մերը մեզ տրված ազատությունն է»²:

Սաբինան վեպի ամենապայծառ կերպարն է: Նա կնոջ այն տեսակն է, որի հետ շփումը խենթացնում է տղամարդկանց: *Ճակատագրական կնոջ* ժամանակակից տեսակը, բայց առանց խոպոպների և առանց շղարշով գլխանցի, փոխարենը՝ Չապլինի գլխարկով: Կարո՞ղ է ինչ-որ բան ավելի գեղեցիկ և ցանկալի լինել, քան անգուգական Սաբինան՝ սև պենյուարով և գլխարկով: Մի թե այդքան հիասքանչ մեկ էլ Թերեզային կարելի է պատկերացնել՝ սիրուց հետո՝ սիրած տղամարդու վերնաշապիկը հագին:

Գրական ստեղծագործության մեջ դետալը պատկեր ստեղծելու ամենակարևոր միջոցներից է: Վեպում *գլխարկը* և *հայելին* դառնում են ոչ միայն Սաբինայի ներաշխարհն ընդգծող շտրիխներ, այլև փիլիսոփայական լեյտմոտիվ:

Չապլինի գլխարկին նմանվող այդ աքսեսուարը Սաբինան ժառանգել է պապից, որը Չեխիայի փոքրիկ քաղաքի քաղաքապետն էր, և այն կարևոր նշանակություն ունի նրա կերպարը հասկանալու համար:

Հոր հուղարկավորությունից հետո Սաբինայի եղբայրը յուրացնում է ծնողների թողած ողջ ունեցվածքը, իսկ Սաբինան վիրավորված հայտարարում է, որ չի պատրաստվում վիճարկել ժառանգության իր իրավունքները և վերցնում է միայն գլխարկը:

Այս աքսեսուարը հերոսուհու ոչ միայն արտաքինի մաս է, այլև նրա ներաշխարհի և կյանքի փիլիսոփայության կարևոր տարր: Նրա համար այս ժառանգությունը հպարտության կամ պարտքի զգացում չէ, ընդհակառակը, նա մերժում է այդ ամենը: Սաբինայի ներսում կա ներքին պայքար՝ աշխարհի մաս լինելու և միևնույն ժամանակ նրանից օտարվելու ցանկություն: Այսպիսի կերպարով նա ասես աշխարհից հեռու է. ոչ թե կլանում է այս աշխարհի ցավն ու տառապանքը, այլ հեռվից է ընկալում դրանք: Գլխարկը խորհրդանշում է նրա ազատության ձգտումը, ավանդույթների հանդեպ հեզմանքը: Նա խուսափում է կապվածությունից և պատասխանատվությունից: Գլխարկը, որը անցյալի արտեֆակտ է, կարող է նաև խորհրդանշել սեփական ճանա-

² Միլան Կունդերա, Կեցության անտանելի թեթևությունը, Եր., Անտարես, 2015, էջ 290:
Այս գրքից արված հետագա քաղվածքների էջերը կնշվեն շարադրանքում:

պարհի որոնումը: Սաբինան մերժում է ոչ միայն իր ընտանեկան, այլ ավելին՝ մշակութային և սոցիալական ավանդույթները: Ն. Ի. Բիկովան գրում է. «Իրական կյանքում գլխարկն անսպասելիորեն դառնում է Թոմայի հետ սիրային խաղի ռեկվիզիտ, իսկ արտասահման մեկնելուց հետո՝ նրա սենտիմենտալ հիշողությունը»³:

Վեպում հերոսուհու արտասովորությունն ընդգծված է նաև *հայելու* միջոցով: Հայելին միշտ առկա է, երբ գործողությունները ծավալվում են Սաբինայի շուրջը: «Մա պարզապես արտասովոր լինելու ցուցիչ չէ. այն և՛ սիրային խաղի ատրիբուտ է, և՛ արվեստի առարկա, և՛ տրամադրության չափանիշ»⁴:

Է. Ա. Սկորիկը և Ա. Ա. Սկորիկը գրում են. «Տեսարանում հայելի տեղադրելը յուրահատուկ միջոց է: Հայելու միջոցով արվեստագետը կարող է ցույց տալ վեպի հերոսի ներաշխարհը, բացահայտել նրա գաղտնիքները, երազանքները, հիշողությունները, այսինքն՝ ստեղծել երկու տարբեր աշխարհներ, իրականություն և հայելուց այն կողմ»⁵:

Թերեզայի կերպարը կերտելու համար կարևոր դետալ է *գիրքը*: Հերոսուհու համար այն ոչ միայն ազատ ժամանակը լրացնելու, այլ նաև կյանքի իմաստն ու նշանակությունը հասկանալու միջոց է: Գրքերը նրա համար յուրատեսակ «վահան» են, որ պաշտպանում են դաժան իրականությունից՝ ապաստան տալով խոսքի ու մտքի աշխարհում: Նրա համար գրքերն այն տարածությունն են, որտեղ նա կարող է լինել ինքն իր հետ՝ հեռու արտաքին աշխարհից: Բացի այդ ամենից, «...գիրքը Թերեզայի համար հատուկ նշանակություն ունենալով նաև որպես առարկա. նա սիրում էր փողոցով քայլել՝ թևի տակ գրքեր դրած: Գրքերը Թերեզայի համար նույնն էին, ինչ նրբագեղ ձեռնափայտն անցյալ դարի դենդիի: Դրանց շնորհիվ Թերեզան տարբերվում էր մյուսներից» (էջ 58-59):

Այս դետալի միջոցով Կունդերան ներկայացրել է նաև մշակութային և փիլիսոփայական այն ազդեցությունները, որոնք ներթափանցել են տեքստ: Յու. Քրիստևան նշում է, որ «յուրաքանչյուր տեքստ մեջբերումների խճանկար է, յուրաքանչյուր տեքստ մեկ այլ տեքստի յուրացման և ձևափոխման արդյունք է»⁶:

Անդրեյ Աստվածատուրովը Ջեյմս Ջոյսի «Ուլիսես» վեպի մասին կարդացած դասախոսության մեջ ասում է հետևյալը. «Գրողներն օգտագործում են այն ամենը, ինչ իրենցից առաջ թողել է մարդկությունը: Օրինակ՝ Ջեյմս Ջոյսի

³ Быкова Н. И. Деталь как художественный прием в фильме Ф. Кауфмана «Невыносимая легкость бытия» и одноименном романе М. Кундеры // Философская мысль, 2017. № 4. С. 1-12. DOI: 10.7256/2409-8728.2017.4.22443. [Электронный ресурс]. Режим доступа: http://enotabene.ru/fr/article_22443.html/ (հղումը՝ 15.11.2020):

⁴ Նույն տեղում:

⁵ Скорик Е. А., Скорик А. А. Композиционные решения в изобразительном искусстве и кинематографе // Концепт. 2014. № 09. ART 14238. [Электронный ресурс]. Режим доступа: <http://ekoncept.ru/2014/14238/> (հղումը՝ 01.12.2020):

⁶ Kristeva J. Semeiotike: Recherches pour une semanalyse. – P., 1969. – P. 146.

«Ուլիսես» վեպն ասես մեջբերումների հավաքածու լինի: Ջոյսն օտար տեքստը մեկ նախադասությամբ մտցնում է իր տեքստի մեջ:

Մենք նույնպես մեջբերումներ ենք անում, մեջբերում ենք Դոստոևսկի, Պուշկին, ավելի շատ՝ Տոլստոյ, անգամ եթե Տոլստոյից ոչ մի ստեղծագործություն չենք կարդացել, միևնույնն է, մեջբերում ենք: Այդպես է: Որովհետև Տոլստոյը մեծ ազդեցություն է թողել նրանց վրա, որոնք եկել են իրենից հետո: Որովհետև թերթերը, ամսագրերը, փոփ երգիչները վերցրել են նրանից ու մատուցել մեզ, և մեզ է հասել ոչ անմիջական ճանապարհով, այլ միջնորդավորված»⁷:

Հիշենք, երբ Թերեզան առաջին անգամ հանդիպում է Թոմային, նրա թևի տակ էր «Աննա Կարենինան»: Սա հուշում էր այն մասին, որ հերոսները սիրելու են իրար, որը Happy End չի ունենալու: Մեջբերելով Տոլստոյին՝ Կունդերան իր վեպում արտահայտում է այնպիսի գաղափար, որը Տոլստոյը ձևակերպել էր «Աննա Կարենինայում»: Երկու գրողներն էլ հաղորդում են այն միտքը, որ հասարակության մեջ գոյություն ունեցող ավանդական ընտանիքի մոդելն իրեն չի արդարացնում:

Թերեզան և Սաբինան հակադիր կերպարներ են: Եթե Թերեզան ծանրությունն ու նվիրվածությունն է մարմնավորում, ապա Սաբինան՝ թեթևությունն ու ազատությունը: Սաբինան ունի ըմբոստ ոգի, ձգտում է ազատության: Նա ընդդիմանում է հասարակական օրինաչափություններին, նրա համար կարևոր է անցողիկ հաճույքը: Սա կյանքի հանդեպ ունեցած նրա մոտեցումն է, նա խուսափում է պարտավորությունների բեռից: Նա արվեստագետ է և ինտելեկտուալ: Թոմայի հետ նրա սիրավեպը պայմանավորված է կրքով, այլ ոչ հավատարմությամբ ու նվիրվածությամբ: Նրա անհոգ վերաբերմունքը կտրուկ հակադրվում է Թերեզայի աշխարհընկալմանը: Սակայն հուզականի պակասը Սաբինայի հոգեկան աշխարհը լցնում է դատարկության զգացողությամբ: Նա և՛ վայելում է իր ազատությունը, և՛ պայքարում մենության ու դատարկության զգացումների դեմ: Այս երկվությունը ցույց է տալիս, որ խորը կապերի բացակայությունը կարող է բերել հոգեկան դատարկություն:

Թերեզան իմաստի փնտրտուքի մեջ է: Նրա սերը Թոմայի նկատմամբ բուռն է, նա ձգտում է կայունության: Թերեզան փորձում է իմաստ գտնել այս կյանքում: Նա խորապես զգացմունքային է իրեն շրջապատող աշխարհի հանդեպ, որը նրան հնարավորություն է տալիս ավելի խորը զգալու սերը, իսկ այդ խորությունը կտրուկ հակադրվում է Սաբինայի անհոգ կեցվածքին: Թերեզայի նվիրվածությունը Թոմային հաճախ հանգեցնում է ներքին ցնցումների, նա պայքարում է խանդի դեմ: Թերեզայի կերպարի միջոցով Կունդերան ցույց է տալիս սիրո բարդությունը: Սաբինայի թեթևությունը թույլ է տալիս հեշտությամբ նավարկել կյանքում, բայց դա հաճախ նրան անկատա-

⁷ Аствацатуров А. (филолог, писатель) – 2021. Джеймс Джойс. Улисс. Ирландия. <https://www.youtube.com/watch?v=9OoCqgwcX6w>

րության զգացում է հաղորդում: Թերեզայի ծանրությունը նրան պատում է անհանգստության ու կորստի վախով: Եթե Սաբինան Թոմային առաջարկում է ազատություն և կիրք, Թերեզան ապահովում է զգացմունքային կապը: Թոմային երկու կանայք էլ ձգում են, որը ցույց է տալիս նրա սեփական պայքարը ծանրության և թեթևության միջև:

Այս կերպարների միջոցով Կունդերան բացահայտում է լարվածությունը ազատության ցանկության և մարդկային կապվածության անհրաժեշտության միջև: Սաբինայի թեթևությունը կարող է ազատագրող, բայց միևնույն ժամանակ մեկուսացնող լինել, մինչդեռ Թերեզայի ծանրությունը կարող է կաշկանդող, սահմանափակող լինել, բայց խորապես բավարարել ու լուսավորել մարդու ներքին աշխարհը: Սաբինան և Թերեզան բարդ կերպարներ են, որոնք մարմնավորում են կյանքի հակադիր փիլիսոփայություններ:

Վեպում մի այսպիսի տեսարան կա. Թերեզան ուզում էր դառնալ Թոմայի երկրորդ «ես»-ը: Դրա համար որոշում է մտերմանալ Սաբինայի հետ և առաջարկում է լուսանկարել նրան: Սաբինան Թերեզային հրավիրում է իր արվեստանոց: Այս տեսարանով Կունդերան մեզ է փոխանցում մարդկային հարաբերությունների բարդությունը: Այստեղ էրոտիկ լարվածություն կա, որը հոգեբանական համատեքստում է: Իրար են հատվում մտերմության և խանդի զգացումները: Թերեզայի այս առաջարկը կարող է ընկալվել որպես մարտահրավեր, ինչ-որ ինտիմ, բայց միևնույն ժամանակ ոչ լիարժեք կապ հաստատելու փորձ: Սաբինան կարող է լինել սիրալիր և անգամ ինչ-որ չափով ընդունել դա որպես խաղ, բայց նա չի զգում այն, ինչ Թերեզան: Թերեզան *ծանրության* դիրքերում է. նա լի է վախով, կասկածներով և ամուսնու երկրորդ կեսը լինելու բուռն ցանկությամբ, մինչդեռ Սաբինան *թեթևության* դիրքերում է. նա համարձակ է, ինքնավստահ, ազատ, խուսափում է հուզական կապերից, երկարաժամկետ պարտավորություններից: Նրա համար կյանքը խաղ է՝ լի հնարավորություններով և փոփոխություններով, և նա ընդունում է դրանք՝ չծանրաբեռնելով իրեն իմաստի և հետևանքի մասին մտորումներով: Լուսանկարելու միջոցով Թերեզան կարծես փորձում է կապել այս երկու աշխարհները, ավելի մոտ լինել իր համար այդքան անհասանելի այդ թեթևությանը: «Ապարատը Թերեզայի համար մեխանիկական աչքի պես մի բան էր, որով նա զննում էր Թոմայի սիրուհուն, այն միաժամանակ շղարշ էր, որով սքողում էր իր դեմքը Սաբինայից:

Երկար ժամանակ պահանջվեց, մինչև Սաբինան վճռեց պենյուարը հագից գցել: Դրությունն ավելի բարդ էր, քան նրան թվացել էր: Մի քանի րոպե տարբեր դիրքերով օբյեկտիվի առաջ կանգնելուց հետո նա մոտեցավ Թերեզային և ասաց.

- Հիմա քեզ լուսանկարելու իմ հերթն է: Հանվի՛ր» (էջ 79):

Թերեզան միամիտ է ու զուսպ: Պայքարի մեջ են նրա մարմինն ու հոգին: Նա դժվարանում է ընդունել իր սեքսուալությունը: Նրա պայքարը զգայական-

նության և բարոյականության միջև է, որը լարվածություն է ստեղծում հարաբերություններում և հաճախ հանգեցնում ներքին կոնֆլիկտի:

Սաբինյան ազատ է և հանգիստ: Նրա էրոտիզմն ավելի բացահայտ է: Նա ուսումնասիրում է իր սեքսուալությունը՝ դուրս գալով ավանդականի սահմաններից: Դա նրան դարձնում է ինքնավստահ և անկախ:

Երկուսի համար էլ էրոտիկան ոչ միայն ֆիզիկական հաճույք է, այլև ինքնաճանաչման, ուրիշի անձը ճանաչելու, ներքին արգելքներն ու սահմանափակումները հաղթահարելու միջոց: Մինչ Թերեզան բախվում է զղջման և փորձում գտնել հավասարակշռություն մարմնի և հոգու միջև, Սաբինյան էրոտիկ հարաբերություններն ընկալում է որպես սեփական ազատությունն արտահայտելու ձև:

Նրանց էրոտիկ փորձառությունները կարող են կապված լինել նաև մարդկային անհատականության ավելի խորը խնդիրների հետ, ինչպես, ասենք, կյանքի իմաստի որոնումն է՝ ուրիշների հետ ֆիզիկական և էմոցիոնալ փոխհարաբերությունների միջոցով:

Ֆրանցը վեպում մարմնավորում է կեցության ծանրությունը: Ի տարբերություն մյուս կերպարների, ինչպիսիք են, օրինակ, Թոման կամ Թերեզան, որոնք կանգնած են ավելի զգացմունքային երկրնորանքների առաջ, Ֆրանցը զբաղված է կյանքի իմաստի փնտրտուքով, ինչը նրա կեցությունն ավելի է ծանրացնում: Ֆրանցը իրավագիտության պրոֆեսոր է, որը հետաքրքրված է քաղաքականությամբ և սոցիալական արդարության պաշտպան է: Նա ձգտում է իդեալիզմի, բայց, միևնույն ժամանակ, իրականությունը ճնշում է նրան. նա անընդհատ ձախողվում է և հիասթափվում ճշմարտություն որոնելիս: Նրա հարաբերությունները Սաբինայի հետ ուժեղացնում են իդեալի և իրականության միջև անհամապատասխանության զգացումը: Նա չի կարող ընդունել այն անհոգ ու թեթև հայացքը, որով Սաբինյան նայում է կյանքին: Եվ հերոսուհու ձգտումը ազատության Ֆրանցն ընկալում է որպես փախուստ իրական խնդիրներից:

Այսպիսով, Ֆրանցը ներկայացնում է կեցության այն տեսակը, որը պայքարում է իդեալի և իրականության միջև գոյություն ունեցող անհամապատասխանության դեմ: Նրա կյանքը լցված է ծանրությամբ, որը բխում է իր գործադրած ջանքերի և ձգտումների ապարդյուն լինելու գիտակցումից:

Կունդերան վեպի երկու հերոսների՝ Սաբինայի և Ֆրանցի փոխհարաբերությունների միջոցով փորձում է վերաիմաստավորել մարդկային բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են հավատարմությունն ու դավաճանությունը, լույսն ու խավարը, երաժշտությունը, գեղեցկությունը, ուժը և այլն: Հեղինակը գրում է, որ Ֆրանցի համար հավատարմությունը բոլոր առաքիլություններից առաջինն է, որը ստեղծում է կյանքի միասնությունը, «այլապես կբեկվեր բյուրավոր ցաքուցրիվ, թռուցիկ տպավորությունների» (էջ 109):

Տարբեր մանկություններ, նրանց ձևավորող տարբեր միջավայրեր: Մերը մոր հանդեպ, որին քել էր ամուսինը, ազդում է այն վերաբերմունքի վրա, որն ունի Ֆրանցը դեպի կինը: Նա առաջին հերթին համակրանք, ակնածանք և հավատարմություն է ցուցաբերում: Հավատարիմ լինելու նրա կարողությունը ծնվում է մանկության զգացմունքներից, մոր հանդեպ սիրուց: Եթե Ֆրանցի *էքզիստենցիալ ծածկագիրը* հավատարմությունն է, ապա Սաբինայի *էքզիստենցիալ ծածկագիրը* դավաճանությունն է: Գայ Սկարպետտան գրում է. «Սաբինան՝ դավաճանության արվեստագետը, սրտի խորքում հուշերի երաժիշտ է, ինչպես Տամինան: Նա գլուխը շրջած անընդհատ փախչում է ներկայի անշարժությունից, որպեսզի որսա լոկ ներկայի գեղեցկությունը անցյալի վերածվելու գործընթացում»⁸:

Դավաճանության զգացումը նույնպես մանկությունից է գալիս, այն կապված է հոր կերպարի հետ: Սաբինան դավաճանությունն ընկալում է որպես կարգը խախտելու և դեպի անհայտություն գնալու հնարավորություն. «Սաբինայի համար անհայտություն մեկնելուց ավելի գեղեցիկ բան չկա» (էջ 110):

Վեպի հերոսները Պրահայի քաղաքական իրադարձությունների ակտիվ քննադատներն են, թեկուզ կյանքի նկատմամբ ունեն տարբեր և հակասական մոտեցումներ: Նրանց ներգրավվածությունն այդ իրադարձություններին ոչ միայն բացահայտում է դարաշրջանի քաղաքական լարվածությունը, այլև դառնում է վեպի հերոսների նարատիվի մի մասը: Կոմունիստների մասին Թոմայի հոդվածը արտացոլում է թերահավատությունը տիրող համակարգի նկատմամբ: Նա չի վախենում արտահայտել իր մտքերը և դրսևորել իր դիրքորոշումը, ինչը հաստատում է նրա ներքին ազատությունը: Եվ Թոման տուժում է իր կարծիքի պատճառով: Նա կորցնում է վիրաբույժի աշխատանքն ու դառնում թերապևտ քաղաքամերձ կլինիկայում, հետո՝ ապակի մաքրող: Կեցության թեթևության իր փիլիսոփայությամբ՝ նա այդ ամենին վերաբերվում է որոշակի անտարբերությամբ՝ այն ընկալելով որպես իր ուշադրությանը չարժանացող հերթական ադմուկ:

Թերեզան նույնպես ներքաշվում է քաղաքական պայքարի մեջ: Այս կերպարի նարատիվը կառուցված է պատասխանատվության զգացումի վրա: Ազատության համար նրա պայքարը դառնում է և՛ անձնական, և՛ հանրային խնդիր: Քաղաքական դեպքերը հերոսուհու համար դառնում են անհանգստության և անորոշության ևս մեկ պատճառ, քանի որ նա փնտրում է սեր և ներդաշնակություն մի աշխարհում, որը նրան մասնատված ու քառասյին է թվում: Երկրի այդ վիճակը նրա համար սթրեսի և զրկանքների աղբյուր է: Քաղաքական ցնցումներին նրա արձագանքը ոչ թե ակտիվություն է, այլ ներքին դիմադրություն, փորձ՝ գտնելու սեփական ճանապարհն իր անկայուն կյանքում: Նա

⁸ **Guy Scarpetta** (1999), *Kundera's Quartet (Critical Essays on World Literature)* ed. Peter Petro, New York: G. K. hall & Co (Գայ Սկարպետտա - ֆրանսիացի արձակագիր, էսսեիստ և արվեստաբան՝ ծնված 1946 թվականին):

լուսանկարում է հարյուրավոր ժապավեններ և բաժանում օտարեկրացի լրագրողներին: Այդ լուսանկարներում Թերեզան ձգտում է ֆիքսել մի իրականություն, որը կորցնում է իր ուժն ու կայունությունը քաղաքական աղետների ազդեցության տակ: Նա չի կարող փոխել պատմության ընթացքը, բայց կարող է գոնե արտացոլել այդ իրականությունը: 1968 թ. ռուսական գորքերի ներխուժումից հետո, երբ Թոման ու Թերեզան քայլում են Պրահայի փողոցներով, զարմանում են՝ տեսնելով, թե ինչպես են այդ փողոցների հին անունները փոխվել ռուսականներով: Կունդերան փորձում է ակնարկել, որ թեև այդ ամենը կարող է սովորական թվալ, այնուամենայնիվ ունի քաղաքական մեծ ենթատեքստ:

Սաբինան միշտ ձգտում է ազատվել ցանկացած տեսակի ճնշումից: Նա իր պայքարն արտահայտում է բողոքի ձևով: Այս կերպարի նարատիվը հակասական բնույթ ունի. նա մի կողմից զգում է պատմական դեպքերի ծանրությունը, մյուս կողմից ձգտում է թեթևության և անկախության՝ հեռու արտաքին աշխարհի ցանկացած աղմուկից:

Ֆրանցը, ինչպես Կունդերայի վեպի մյուս կերպարները, քաղաքական իրադարձություններին վերաբերվում է ներքին կասկածով: Նա ակտիվ մարտիկ չէ, բայց նայնպես այդ դեպքերն ազդում են նրա կյանքի ու մտքերի վրա: Չնայած մասնակցում է ցույցերին, բայց անջրպետ է տեսնում իր ապրումների և քաղաքական գործընթացի միջև: Նա զգում է, որ քաղաքականությունն իր համար գաղափարախոսության հարց չէ: Ինչպես կյանքի այլ ասպեկտներում, այստեղ նույնպես նա բախվում է կեցության անիմաստությանն ու թեթևությանը:

«Կեցության անտանելի թեթևությունը» վեպի հերոսները զգում են, թե ինչպես են ծանրությունն ու թեթևությունը ազդում իրենց կյանքի, ընտրությունների և հարաբերությունների վրա: Այս կերպարներից յուրաքանչյուրը և՛ առանձին պատմություն է, և՛ ընդհանուր ճակատագրի անխուսափելի մաս:

Եզրակացություն

Միլան Կունդերայի «Կեցության անտանելի թեթևությունը» վեպի կերպարների վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես են թեթևության և ծանրության փիլիսոփայական հասկացությունները ներթափանցում հերոսների ճակատագիր: Միջտեքստային հղումների միջոցով հեղինակը բացահայտում է մարդկային գոյության բարդ կողմերը, որտեղ թեթևությունն ու ծանրությունը դառնում են ոչ միայն փիլիսոփայական կատեգորիաներ, այլև շարժիչ ուժեր, որոնք պայմանավորում են հերոսների գործողությունները և ներաշխարհը: Այս երկու հակադիր ուժերի համատեքստում Կունդերայի կերպարները՝ Թոման, Թերեզան, Սաբինան և Ֆրանցը, հայտնվում են ընտրության առաջ՝ հավասարակշռելով իրենց կյանքը թեթևության և ծանրության միջև: Թոման սիրո և ազատության իր ընկալմամբ հեշտություն է փնտրում և փորձում խուսափել կապվածությունից ու պարտավորություններից: Նրա համար կյանքը

ոչ այլ ինչ է, քան ակնթարթային հաճույք, ինչը երևում է կանանց հետ հարաբերություններում: Նա իրեն չի ծանրաբեռնում փիլիսոփայական մտորումներով: Իր կյանքն ընկալում է որպես անցողիկ մի բան, յուրաքանչյուր իրադարձություն՝ որպես կշիռ չունեցող պատահականություն:

Թերեզան, իր հերթին, զգում է կապվածության ծանրությունը: Թումայի հետ նրա հարաբերությունները լցված են ոչ միայն սիրով, այլև ցավի, մերժվածության ու դավաճանության զգացումով: Նա ձգտում է խորություն գտնել իր զգացմունքներում և չի կարող ընդունել այն դատարկությունը, որ Թուման բերում է իրենց հարաբերություններ: Թերեզան աշխարհն ընկալում է որպես մի կարևոր բան, որտեղ յուրաքանչյուր ընտրություն կարևոր է, և յուրաքանչյուր գործողություն թողնում է հետք: Այսպիսի հայացքը դժվարացնում է նրա կեցությունը: Սակայն հենց այս ծանրության միջոցով է նա փորձում գտնել կյանքի իմաստը: Նա գիտակցում է, որ սեփական տառապանքը իր էության մի մասն է, և այս տառապանքի միջոցով նա դառնում է ավելի կենդանի և իրական, քան Թուման:

Ի տարբերություն Թերեզայի՝ Սաբինայի կյանքը թեթև ու մակերեսային հարաբերությունների շղթա է: Նա ինչ-որ պահի զգում է, որ այդ թեթևությունն իր կյանքը դարձրել է դատարկ և աննպատակ:

Ֆրանցը ձգտում է վսեմին, կյանքում և հարաբերություններում իմաստ է որոնում: Սաբինայի հետ սիրային կապը նրան այս զգացումը չի տալիս, և նա բախվում է ներքին կոնֆլիկտի: Նա զգում է կեցության, իր իդեալների ծանրությունը՝ դրանց հասնելու անհնարինության պատճառով:

Սաբինան և Ֆրանցը յուրաքանչյուրը յուրովի զգում են այդ երկվությունը: Նրանք իրական արժեքներ են փնտրում մի աշխարհում, որտեղ թեթևությունն ու ծանրությունն անբաժան են թվում: Թեթևությունը գայթակղիչ է, բայց դատարկության զգացողություն է բերում: Ծանրությունը խանգարում է լինել ազատ, բայց տալիս է սեր, նվիրում, և հենց դրանում է մարդկային գոյության իմաստը: Այս բոլոր կերպարներն ապրում են մի աշխարհում, որտեղ թեթևությունն ու ծանրությունը հատվում են և ազդում միմյանց վրա, և դրանց փոխազդեցությունը ձևավորում է ոչ միայն վեպի կերպարների անձնական ճակատագիրը, այլև կյանքի իմաստի, սիրո և ազատության մասին փիլիսոփայական ըմբռնումներ:

Վեպն ընդգծում է փիլիսոփայական այդ հասկացությունների արդիականությունը, ընթերցողին մղում խորը ինքնավերլուծության ու նաև մտորելու աշխարհում մարդու տեղի ու դերի մասին:

КРИСТИНЭ ДАДЯН – Персонажи романа Милана Кундеры «Невыносимая легкость бытия» в контексте легкости и тяжести бытия. – Цель данного исследования – проанализировать абстрактные понятия легкости и тяжести бытия сквозь призму персонажей философского романа Милана Кундеры «Невыносимая легкость бытия». Главные персонажи – врач Томаш, его жена Тереза, любовница Сабина и возлюбленный Сабинны

Франц – представляют разные подходы к этим концепциям. В романе легкость и тяжесть постоянно переплетаются, вызывая внутренние конфликты и страдания. Персонажи Кундеры живут в мире, где легкость и тяжесть бытия, как противоположные силы, проникают в каждое их действие, в каждый их выбор. Эти силы становятся не только философским фоном произведения, но и решающими факторами в судьбе персонажей.

Задача исследования выявить взаимосвязь между легкостью и тяжестью бытия посредством философских концепций и понять, как они влияют на свободу человека и его судьбу. **Актуальность исследования** обусловлена возрастающим интересом к экзистенциальным вопросам в литературе, а также изучением философских понятий в контексте художественного произведения.

Ключевые слова: *Милан Кундера, Томаш, Сабина, времена, времена оттепели, экзистенциальный код, атрибут любовной игры, черный пеньюар и шляпа, легкость и тяжесть, Гай Скарпетта, реквизит.*

KRISTINE DADYAN – *The Characters of Milan Kundera's Novel the Unbearable Lightness of Being in the Context of Lightness and Heaviness of Existence.* – The aim of the study is to analyze the abstract concepts of the lightness and heaviness of existence in Milan Kundera's philosophical novel *The Unbearable Lightness of Being* through its characters. The main characters — Dr. Tomas, his wife Teresa, his mistress Sabina, and Sabina's lover Franz — represent different approaches to these concepts. In the novel, lightness and heaviness constantly intertwine, creating internal conflicts and suffering. The characters in Kundera's novel live in a world where the lightness and heaviness of existence, as opposing forces, penetrate every action and choice they make. These forces become not only the philosophical backdrop of the work but also determining factors in the lives of the characters.

The study aims to reveal the connection between the lightness and heaviness of existence as philosophical categories, and how they influence human freedom and fate.

The relevance of the study is determined by the growing interest in existential questions in literature, as well as the exploration of philosophical concepts within the context of literary works.

Key words: *Milan Kundera, Tomas, Sabina, times of delirium, existential code, attribute of a love game, black peignoir and bowler hat, lightness and heaviness, Guy Scarpetta, prop.*

Գրականության ցանկ

Չունդերա Միլան, Կեցության անտանելի թեթևությունը, Եր., Անտարես, 2015, էջ 290
Аствацатуров А. (филолог, писатель) – 2021. Джеймс Джойс. Улисс. Ирландия.
<https://www.youtube.com/watch?v=9OoCqgwcX6w>

Быкова Н. И. Деталь как художественный прием в фильме Ф. Кауфмана «Невыносимая легкость бытия» и одноименном романе М. Кундеры // Философская мысль, 2017. № 4. С. 1-12. DOI: 10.7256/2409-8728.2017.4.22443. [Электронный ресурс]. Режим доступа: http://enotabene.ru/fr/article_22443.html/ (հղումը՝ 15.11.2020)

Скорик Е. А., Скорик А. А. Композиционные решения в изобразительном искусстве и кинематографе // Концепт. 2014. № 09. ART 14238. [Электронный ресурс]. Режим доступа: <http://ekoncept.ru/2014/14238/> (հղումը՝ 01.12.2020)

Guy Scarpetta (1999), 'Kundera's Quartet, (Critical Essays on World Literature) ed. Peter Petro, New York: G.K. hall & Co., 189

Kristeva J. Semeiotike: Recherches pour une semanalyse. – P., 1969. – P. 146

Kundera Milan. Dialogue on the Art of the Novel. The Art of the Novel. New York: Grove Press, 1986